



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

հոկտեմբերի 2018 թվականի №
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԵՌ ԿԱՄՍԱՐԻ 30/3 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ
ՄՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով՝

ա) որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և Երևան քաղաքի Լեռ Կամսարի 30/3 շենքի (այսուհետ՝ շենք) կառուցապատող «Լ և Գ ԻՆԿՈՍ» սահամանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կառուցապատող) միջև 2015 թվականի հուլիսի 20-ին կնքվել է նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման №1576611 պայմանագիրը, որով սահմանված միացման վճարը շենքի Կառուցապատողը չի վճարել,

բ) «Լեռ Կամսար 30/3» համատիրության նախագահի (այսուհետ՝ համատիրության նախագահ) 2018 թվականի ապրիլի 20-ի դիմումը՝ շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները Կառուցապատողի փոխարեն կատարելու վերաբերյալ,

գ) Ընկերության 2018 թվականի մայիսի 18-ի №04-ԴԳ-420 գրությունը, համաձայն որի՝ Ընկերությունը չի առարկում շենքի սպառման համակարգը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով էլեկտրական ցանցին միացմանը,

դ) համատիրության նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 4-ի գրությունը, համաձայն որի՝ համատիրությունը չի առարկում միացման վճարը Կառուցապատողի փոխարեն վճարելուն և շենքի սպառման համակարգը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով էլեկտրական ցանցին միացմանը,

ե) Ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №04-ԿՀ-994 գրությունը՝ սույն որոշման «ա» կետում նշված պայմանագրով ամրագրված միացման վճարի նկատմամբ

Ընկերության պահանջի իրավունքը «Լեռ Կամսար 30/3» համատիրությանը զիջելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) շենքի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման 3 399 500 ՀՀ դրամ միացման վճարը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը, վճարում է շենքի համատիրության նախագահը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված միացման վճարի վճարման պահից հնգօրյա ժամկետում Ընկերությունը համատիրության նախագահին է ներկայացնում սույն որոշման «ա» կետում նշված պայմանագրով ամրագրված՝ Կառուցապատողից միացման վճարի Ընկերության պահանջի իրավունքի զիջման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս տրամադրելով իր կողմից կնքված պայմանագիրը՝ 2 օրինակից.

3) սույն կետի 1-ին ենթակետում նշված միացման վճարի վճարման օրվանից մինչև շենքը փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 300 օրը.

4) չի թույլատրվում համատիրության նախագահից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրելու հատուցում, ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, այդ թվում սույն որոշման 2-րդ կետում նշված պահանջի իրավունքի զիջման պայմանագրով, եթե դրանք սահմանված չեն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններերով, սույն որոշմամբ, էլեկտրամատակարարման պայմանագրով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը և շենքի համատիրության նախագահին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
հոկտեմբերի 2018թ.